

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 247

Իններորդ պատուիրանքը – Ելից 20:16ում Աստուած ասում է թէ՛ «Ընդ որացու դէմ սուտ վկայութիւն մի անիր» (Երկրորդ Օրինաց 5:20): Իններորդ պատուիրանքը վերաբերում է ճշմարտութեան սրբութեանը հետ: Այս պատուիրանքի անմիջական ենթահողը դատարանի տեսարանի վերաբերեալ է, ուր վկաներ արգելւած են ուրիշների մասին սուտ վկայութիւն տալ (Առակաց 17:15): Սուտ վկայութիւն տալը կարող է ուրիշին մեծ վնաս պատճառել՝ նրա անունը, նկարագրին, աշխատանքին, ընտանիքին, եւ նոյնիսկ հենց նրա կեանքին (Մաղմոս 64:3, Առակաց 25:18): Աստուած մեծապէս մտահոգւած է ճշմարտութեամբ եւ արդարութեամբ, եւ ուստի պաշտպանելու անմեղ մարդկանց Նա խիստ օրէնքներ տուց հին Իսրայէլին սուտ վկայութեան դէմ (Ելից 23:1, 6-8, Երկրորդ Օրինաց 19:15-21, Առակաց 19:5, 9, Գ. Թագաւորաց 21:7-19, Մատթէոս 26:59-60, Գործք Առաքելոց 6:11-13): Սակայն, այս պատուիրանքը պարզապէս սահմանափակւած չի դատարանի գործողութեամբ այլ դրա աւելի լայն առնչութեամբ զբաղւած է մեր կեանքի բոլոր պարագաներով՝ արգելելով մեզ ուրիշին վնաս պատճառելու մեր խաբուսիկ խօսքերով կամ արարքներով:

Այս պատուիրանքը գերագոյնօրէն հիմնաւորւած է Ինքն Աստծոյ բուն բնութեան ու նկարագրի վրայ, որն է ճշմարտութեան ակն ու աղբիւրը (Թւոց 23:19, Յոբ 34:12, Առակաց 30:5, Եսայիա 65:16, Յովհաննէս 4:24, 14:6, 17:17, Տիտոս 1:2, Եբրայեցիս 6:18, Ա. Պետրոս 2:2): Միւս ձեռքի վրայ, Աստուածաշունչը նկարագրում է Սատանային որպէս ստութեան հայրը (Ծննդոց 3:4, Յովհաննէս 8:44, Գործք Առաքելոց 5:3, Բ. Կորնթացիս 11:3, Յայտնութիւն 12:9): Մարդու վերաբերեալ, Աստուածաշունչն ուսուցանում է թէ ընկած մարդու բնական դիրքաւորումն է ստել, որը յառաջ է գալիս նրա սրտիցը (Մաղմոս 12:2, 58:3, 116:11, Եսայիա 59:4, 12-13, Երեմիա 9:3, 5, 8, Մատթէոս 15:19, Հռովմայեցիս 3:13-14): Երբ մենք ստում ենք մենք վնասում ենք մեր դրացուն՝ որը ստեղծել է Աստծոյ պատկերով, սակայն մենք ի վերջոյ անպատում ենք Աստծուն եւ արհամարհում ենք Նրա ճշմարտասէր նկարագիրը (Մաղմոս 5:6, Առակաց 6:16, 19, 12:22, 19:5): Կան բազմաթիւ կերպեր որոնց միջոցով մենք կարող ենք խախտել այս պատուիրանքը: Երբ մենք երդումներ եւ ուխտեր ենք երդում Աստծոյ առջեւ բայց ապա զանց ենք անում դրանք, կամ երբ մենք գողանում ենք ուրիշներից խարդախ առեւտրական կերպերով, մենք այս պատուիրանքը խախտում ենք: Մենք նաեւ խախտում ենք այս պատուիրանքն երբ բամբասում, գրպարտում, եւ ծաղրում ենք ուրիշներին նրանց բացակայութեանը մէջ՝ կրկնելով նրանց թերութիւնները, ուրախանալով նրանց սխալագործութիւններում, նսեմացնելով նրանց ուրիշների առջեւ (Ելից 23:1, Ղեւտացոց 19:16, Մաղմոս 50:20, 101:5, Առակաց 18:8, 20:19, Ա. Կորնթացիս 13:6, Կողոսացիս 3:8-10, Յակոբոս 3:2-12, 4:11, Ա. Պետրոս 2:1): Մի այլ կերպ որով մենք կարող ենք խախտել այս պատուիրանքն այն է երբ նախանձից եւ հպարտութիւնից մենք ուրիշների ասած ու արած բաների համար գովասանք ենք յափշտակում, ուստի վնասելով եւ արժէքազրկելով նրանց (Հռովմայեցիս 12:3, 16, Ա. Կորնթացիս 4:6, Փիլիպպեցիս 2:3-4): Ի վերջոյ, մենք նաեւ կարող ենք կոտրել այս պատուիրանքն երբ մենք ասում կամ սովորեցնում ենք Աստծոյ մասին սխալ բաներ՝ Նրա բնութեան ու Նրա գործերի մասին (Մատթէոս 5:19, Եբրայեցիս 13:17, Յակոբոս 3:1):

Դրական կողմից, որպէս նրանք որոնք ստեղծել են Աստծոյ պատկերով եւ որոնք աստիճանաբար Քրիստոսի պատկերին կերպարանակից են դառնում (Ծննդոց 1:26-27, Հռովմայեցիս 8:29, Եփեսացիս 4:24), մենք կոչւած ենք նմանելու մեր Աստծուն եւ գնահատելու ճշմարտութիւնը (Մաղմոս 119:163, Առակաց 12:22, 23:23): Փոխարէն խաբել, բամբասել, գրպարտել, եւ չարախօսել, մենք խօսելու ենք ճշմարտութիւնը՝ օրհնելով, բուժելով, եւ շինելով միմիանց մեր լեզուներով (Մաղմոս 15:1-3, Առակաց 12:17-19, Զաքարիա 8:16-17, Եփեսացիս 4:15, 25, 5:18-21, Փիլիպպեցիս 4:8): Մենք հաւատարիմ ենք լինելու մեր խօսքին, չյետաձգելու կամ մերժելու մեր խոստումները. եթէ ոչ, մենք կհամարենք որպէս ստախօսներ, կեղծաւորներ, եւ անկայուն մարդիկ որոնք անվստահելի են՝ վատնելով մեր բարի անունն ու բարոյական նկարագիրը՝ վիրաւորելով ուրիշների հետ մեր յարաբերութիւնները, եւ բերելով անպատուութիւն Աստծուն (Առակաց 10:7, 22:1, Ժողովող 7:1ա, Գործք Առաքելոց 6:3, Բ. Կորնթացիս 1:17-20, Յակոբոս 5:12, Ա. Յովհաննէս 1:6, Գ. Յովհաննէս 1:12):

Այս պատուիրանքի նկատմամբ մի յաճախ ծագած հարցում այս է թէ՛ «Արդե՞ք երբեւիցէ թոյլատրելի է սուտ ասել»:
Այսպէս մի հարց ընդհանրապէս յառաջանում է Աստուածաշնչում երկու շատ յայտնի հատածների պատճառով՝ առաջինը լինելով Եբրայեցիների մանկաբարձների պատմութիւնը (Ելից 1:15-21), եւ երկրորդը լինելով Ռախաբի պատմութիւնը (Յեսու 2:1-6): Արդե՞ք մանկաբարձները սուտ ասեցին պաշտպանելու Իսրայէլացի երեխաներին: Արդե՞ք Աստուած օրհնեց նրանց սուտը, կամ Ռախաբինը պաշտպանելու լրտեսներին: Քրիստոնէայ աստուածաբաններ բաժանուած են այսպէս հարցերի նկատմամբ: Ոմանք նշում են որ ստելն երբէք թոյլատրելի չի, նոյնիսկ եթէ այն մի լաւ նպատակի համար է, քանի որ այն հակառակ է Աստծոյ բնութեանը. մինչ ուրիշներ հաստատում են որ մենք միշտ պարտաւոր ենք ճշմարտութիւնն ասելու նրանց որոնք ճշմարտութիւնն իմանալու իրաւունքն ունեն, եւ թէ ոչ բոլոր խաբէութիւններ սուտեր են քանի որ կան պարագաներ ուր անմեղ կեանք պաշտպանելու համար մենք բարոյապէս պարտաւոր ենք խաբելու՝ որն է մի աւելի բարձր բարոյական օրէնք, ուստի իրագործելով իններորդ պատուիրանքի նպատակը՝ որն է չվնասել մեր դրացուն մեր խօսքովը: